ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ ***08.04. 2014 թ.***

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 84-ը:

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը, մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների, հասարակական կազմակերպությունների, լրատվության ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Արկադի Չերչինյանը:

Օրակարգում՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ոլորտի 2013 թվականի ձեռքբերումների և 2014 թվականի առաջիկա անելիքների մասին:
   Զեկ. Վ. Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

2. Մարզի համայնքների բյուջեների 2014 թվականի առաջին եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների և մարզում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստեղծված էլեկտրոնային վճարումների <<Client Treasure>> համակարգի ներդրման մասին:

   /Զեկ. Յու. Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու մասին:
   /Զեկ. Ի. Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Ս. Կարապետյանը - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար
Դ. Բաղդասարյանը - Հայրավանք համայնքի ղեկավար
Վ. Գևորգյանը - Ծովագյուղ համայնքի ղեկավար
Վ. Գևորգյանը - Սարուխան համայնքի ղեկավար
Հ. Գաբրիելյանը - Խաչաղբյուր համայնքի ղեկավար

Հայտարարություններով հանդես եկան մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դ. Հովհաննիսյանը և քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ Հ. Բիձյանը:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և աշխատավարձերի գծով կուտակած պարտքերը մարելու ուղղությամբ.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը գույքահարկի և հողի հարկի արխիվացված բազան ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 4-ը ֆինանսական և աշխատավարձերի պարտքերի մասին հաշվետվությունները ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

4) 2013 թվականին համայնքներին տրամադրված սուբվենցիաների վերաբերյալ հաշվետվությունները սեղմ ժամկետում ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն.

5) համայնքների բնակիչներին, գյուղացիական տնտեսություններին տրամադրվող պարարտանյութի, սերմացուի և դիզվառելիքի ցուցակները հաստատել համայնքների ավագանիների նիստերում և փակցնել բնակչությանը տեսանելի վայրերում.

6) աշխատանքներ տանել վարչական հսկողության արդյունքում գրանցված խախտումները վերացնելու և նոր խախտումներ թույլ չտալու ուղղությամբ.

7) իրականացնել համայնքների ղեկավարների աշխատակազմերի օպտիմալացումը.

8) համայնքների գլխավոր հատակագծերը պատվիրելու համար ֆինանսական հնարավորությունները քննարկել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դ. Հովհաննիսյանի և ֆինանսական ու սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յու. Մուշեղյանի հետ.

9) իրականացնել գերեզմանատներում առակա իրավիճակը շտկելուն ուղղված միջոցառումները՝ համաձայն շրջաբերականով ուղարկված ժամանակացույցի:

10) շրջաբերականների պատասխանները **սահմանված ժամկետներում** ուղարկել մարզպետարան:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ